

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար սարե-  
կան 10 ֆրակ. վեցսու-  
սուայ 5 ֆրակ. Արսասահ-  
մանի համար սարեկան 12  
ֆրակ. վեցսուսուայ 6 ֆր.

ԿԱՆԿԻՆՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Իրոքիւնիս հետ տուիր :

Իրանացական տոյք 20 սակ-  
քիս հ :

# ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկել  
խախտութեան հասցիին .

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна.

Redaction du journal  
„Charjoum“  
Varna (Bulgarie).

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԷԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—(—)

Փրկարար ծրագիր մը պուշկարա-  
րահայտըսան համար, Շարձ. —  
Թողի՛ք երգե՛ն, Գաւեր-Արշալիր. —  
Մոռի՛ն մեք (կերտած), Վահան Մա-  
նուկեան. — Խուսկ կուգն, Գ. Ա. —  
Փախստականի շիշասակարան, Շ. —  
Ազգային. — Քուրդական դիպիր. —  
Տեղական. — Ինչ ու զի. — Արսա-  
սուայ խորհրդածոյքիւններ. — Թուրքի-  
նէն յետ :

### ՓՐԿԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ ՄԸ

ՊՈՒՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

—(—)

Պուշկարիոյ կարեւոր հայ-  
գաղութին կրթութեան հարցին  
վրայ շատ գրուեցաւ ու խոս-  
ուեցաւ, առանց ունէ արդիւնք  
ձեռք բերուելու, նոյն լսկ կա-  
րելի է ըսել առանց մեծ ուշադ-  
րութեան շարժելու այդ հարցին  
շուրջ :

Եւ սակայն այդ խնդիր կը մը-  
նայ մշտաբար ու կենդանի  
գրութեան մէջ, իրենց վրայե-  
ցնելով տոհմային առողջ դաս-  
տարակութեան պէտքն զգացող  
մասունքն ու անձնաւորութիւններ :  
Մինչեւ ցարդ, եւրոպական այս  
ցամաքակալի լրայ, հայերը՝  
օտար սարքերու հետ խառնի-  
խուռն, հեռու հայկական վա-  
կեղրոններէ, սառնութեամբ մը  
պաշարուած են հանգէպ իրենց  
ազգային ոգիին, հանգէպ իրենց  
պատմութեան ու իրենց տոհմային  
ինքնաճանաչութեան :

Այս երեւոյթի վտանգաւոր բան  
է, ու կերեւայ թէ այժմ շեշ-  
տուած է այն աստիճան սուր  
կերպով որ զանազան շրջանակ-  
ներու մէջ հոտանք մը գոյացած  
է անոր առաջին առնելու հա-  
մար :

Եւ այս երեւոյթին բարձման  
միակ ճարն է կրթութեան հար-  
ցին միանգամ ընդ միշտ լուծու-  
մը՝ կեղրոնական վարժարանի  
մը հիմնարկութեամբ Պուշկարիոյ  
ամէնէն կեղրոն ու յարմար քա-  
ղաքին մէջ :

Մեր առած տեղեկութիւննե-  
րուն նայելով, փիլիպէի հայու-

թեան կարեւոր մասին մէջ  
այս ծրագիր արդէն ծնունդ ա-  
ռեր է ու զայն իրագործելու մի-  
ջոցները կուտումնասիրուին : Ահա՛  
ճշմարիտ ու իրական ազգասի-  
րութիւնը :

Կեղրոնական վարժարան մը  
հիմնել՝ էրու, գիւրին գործ չէ՛  
այս քաղաքի համայնքի առկա  
գրամի կարօտ է : Պուշկարիոյ  
թիւնը ի՛նչ քաջեց մինչեւ որ  
ունեցաւ իր կեղրոնականը, որ,  
աւագ, տասնամեայ փայլուն ու  
փոթորկալից կեանքէ ետք շի-  
շու համասիրու ու արժարժուն  
կեղրոն արձկելէ ետք շորտին :  
Ինչո՞ք յիշատի առնելով միջավայ-  
րի գիւրութիւններն ու պայ-  
մանները, մենք կը կարծենք  
թէ Սահմանադրութեամբ օժ-  
տուած երկրի մը մէջ շատ առկա  
գիւրին է այսպիսի ծրագրի մը  
գործադրութիւնը, կը բաւէ որ  
անվճար բարեացակամութիւն մը  
և անայլայլ յարատեւութիւն մը  
լեզին իրար զօղեն բոլոր Պուշ-  
կարիոյ անշատ հայութիւնը, հա-  
ւաքական հոգայ ուժ մը կեղրո-  
նացնելով կեղրոնականի մը տա-  
ճարին հիմնարկութեան բոլոր-  
տիքը :

Խօսքերնիս կուղղենք Պուշկա-  
րիոյ մեր սիրելի հայրենակից-  
ներուն. ա՛լ կը բաւէ որչափ մնա-  
ցիք կաշկանդուած բարքերու  
ճնշումին տակ, կը բաւէ՛ որչափ  
բուն քնացաք օտարութեան թրմ-  
րեցնող միջնորդութիւնները,  
ցնցուեցէ՛ք, ջանացէ՛ք ըմբռնել  
թէ դուք հայ էք, հայ պէտք է  
մնաք ու ստատրէ՛ք ապագայ հա-  
յութեան պահպանմանը : Ձե՞ք  
գիտեր թէ ճիշդ ձեր գտնուած  
պայմաններուն մէջ էր որ ան-  
դարձ կորսուեցան Հնդկաստանի,  
Լեհաստանի ու մասամբ Ռուսա-  
նիոյ հայկական սքանչելի գաղ-  
թականութիւնները : Ա՛լ շատ  
գառն, շատ սարսափելի եղան  
այս փորձեր : Կը բաւեն : Ափ մը  
ժողովուրդ ենք արդէն. անոր  
վրայ բացուած լայն ու խորունկ  
խրամաններն ինչո՞վ պիտի կա-  
րենանք լեցնել : Երբ անդին,  
թուրքիոյ մուսլ կրթմանին տակ  
հայը արիւն արցունք կը թափէ

կորստեան վիճին վրայ ծռած,  
հարկ չէ՞ որ գոնէ ազատ ու ան-  
գորր երկիրներու մէջ ջանանք  
զարգանալ բարոյական ու նիւ-  
թական ամէն կարելի առաւելու-  
թիւններով, մասամբ լեցնելու  
համար մեր հէք եղբայրներուն  
անհաշուելի կորուստները :

Փամանակ է որ Պուշկարիոյ  
հայը թոթովուի, սուքի կենայ,  
ձեռք ձեռքի ապ, չինայէ նիւ-  
թական ոչ մէկ զոհողութիւն,  
Սեւ Ծովու ափունքին վրայ կանգ-  
նելու համար կրթութեան մեծ  
խորան մը, որ ոգի, կորով,  
կենդանութիւն պիտի զեղու :

Կեղրոնական մը ծոցեցէք այս  
գաղախարին վրայ, ու պիտի  
հասկնաք անոր կարեւորութիւնն  
ու մեծութիւնը :

ՇԱՐՋՈՒՄ

### ԹՈՂԷՔ ԵՐԳԵՆ

—(—)

Մարդէն սկսելով մինչեւ թուրք  
որ իր ճշտողութեամբ անտառին ամա-  
յութիւնը կը զուարթացնէ, մինչեւ  
յետին ճպուռը որ խոտերուն մէջ  
պահուած՝ ամբան պիշերներուն  
մեղմազնութիւնը կը շեշտէ իր կը-  
րուկութեանը, ամբողջ կենդանային  
գասակարգին վրայ անխտիր տարա-  
ժուած է զօրաւոր բնազդ մը, որ  
երգն է :

Բերանը կը խօսի. լսկ հոգին  
կերգէ : Անոր էական : Էջաքերէն  
մէկն է :

Ուր որ զգացում մը կը տիրէ  
զուարթ կամ տխրագրեցիկ, մեղա-  
մաղճոտ կամ խանդավառ, զգացում՝  
որ հոգին կը լեցնէ անհուն ուրիշանի  
մը կոհակներուն պէս, ահա այն սեղ  
կը բխի երգը իբրև ամբողջ յոր-  
դում մը, գոլորշիացում մը, որ  
սփոփելով կը սլանայ դէպ իր ըն-  
դունարանը, երկիրք :

Եւ կրգը անոր համար ամէն տեղ  
է, որովհետեւ զգացում կայ աշխար-  
հի մէջ ամէն տեղ, սիրոյ խորանէն  
սկսեալ մինչեւ սեւ փոսին եզերքը :

Եւ ո՞վ չերգեր. . . Ի՞նչ կընէ խո-  
նար հողագործը իր արօրը վարած  
ատեն, ինչպէս նաեւ հուժկու գոր-  
ծաւորը, երբ սալին առջեւ բերա-  
ւոր կայծերէ շրջապատուած է, ի՞նչ  
կընեն հողիւր յիշարներուն մէջ-  
տեղ, եւ կոյսը երբ ձեռագործին  
վրայ յենած՝ մաքրով կը թափառի  
անուրջներուն մէջ. նոյնը ինչ որ

կընէ խեղճ բանասարկեալը, եւ հայ-  
րենիքէն հոռու օտարութեան մէջ հե-  
ծող վտարանդին : Կերգեն, մոռնալու  
համար երկար ու ձիգ օրերու ձանձ-  
րոյթը :

Ո՛չ որ կընայ կապուել այս ի-  
րաւունքը :

Վերջին տեսները, Պուշկարի  
տեղէ առկա եւ անսանձ թըն-  
դացին մեր ազգային բոլոր երգերը  
Մայր-Արաքսէն սկսեալ մինչեւ գա-  
ւառական յետին լալկան մեղեդին :

Երգին տուած յուզման, եւ անոր  
ամբողջ եւ ազնուացուցիչ ազդեցու-  
թեանը միայն բարձրագոյն բանաս-  
տեղծութիւնը կընայ հաւասարել :

Հայերը առանց երաժշտական նըր-  
բին դաստիարակութիւն մը ստացած  
ըլլալու, միշտ ուրախաբեր ընդու-  
նակութիւններ ցուցուցած են այդ  
մասին :

Մեր այնքան ազու հին եւ նոր  
երգերը, մերթ հայրենասիրութեան  
թունդ աւելնէ բխած եւ երբեմն խոր  
ցաւերու արտայայտութիւն, վկայ  
են այդ բանին :

Ո՞վ չէ յուզուած Տարլորիկի ցնցել  
հոտանքէն, ո՞վ արցունքի կաթիլը  
չէ զգացած բերին ծայրը երբ վշտա-  
բեկ գաւառացին այնքան տխուր  
չեշտերով «Վասպուրականի օրիորդ-  
ներուն սեւեր հագնիլը» իր Հայրի-  
կին կը գոծէ :

Նոյն իսկ թրքական կոպիտ կաշ-  
կանգները չէին կրցան խեղդել  
մեր հոգիներուն ձայնը. միշտ կը  
բխէր ան, նկուղին մէջ, տանիքին  
վրայ, ամէն տեղ. եւ հայրենեաց ու  
ազատութեան սիրով վտուած սըր-  
տերու միջեւ, նոր կրօնքի մը պէս,  
միութեան գիծ մը կը դնէր :

Հայը պէտք ունի երգելու, գի կը  
կը տառապի, խմբովին երգելու, ինչ-  
պէս խմբովին կաղօթէ Աստուծոյ տա-  
ճարին մէջ :

Եւ մտածել թէ կը գտնուին կարգ  
մը անհասաներ, որոնք ճիգեր կը  
թափեն արգիլելու հայը երգելէ նոյն  
իսկ Պուշկարիոյ ազատ հողին վրայ.  
Եւ այս՝ այնպիսի անվայել անակա-  
նութիւն որոնք արտաբերողներուն ան-  
ազնուութեան բացորոշ ապացոյցներ  
են :

Այս պարոնները որ անգամ մըն  
ալ կապացուցանեն Շիլլէրի համբա-  
ւաւոր վճիռը, կ'ըղձան որ հայը  
բնաւ կենդանութեան նշան չտայ,  
չվերածնի ու չզարգանայ, հապա  
միշտ գերեզմաններու քով թափառի,  
աչքը շեշտակի յառած սեւ հողին,  
մինչեւ որ ինք ալ դիակ մը դառ-  
նայ :

Ու իրենք, լիտան ճշմարիտ ազ-  
ուաներու պէս, վրան խուժեն գի-  
շատելու :



հայրազգայնական մէջ : Յաջողութիւն :

— Այսպիսով կեդրոնականի մասին ասկից առաջ ճիշդ եւ զած էին զայն վարժապետ անոցի վերածելու համար : Միմ կիմանանք թէ այս ծրագիրը իրագործուելու վրայ է : Առանձն զանազան ճիւղերու ծրագրին պատրաստութիւնը յանձնուած է կարգ մը անձերու : Մեզք կեդրոնականին :

— Միացեալ Ընկերութիւնը այժմ բոլորովին վերցած ու անոր տեղը բռնած է ուրիշ մը «Պաւլոսային» միացեալ ազգային վարժարանաց խնամակալութիւն» երկարապատում անունով : Պլաւստի կազմութեան խնդիրով զբաղած է եղբեր, և կամ կապատէ որ այս ուսած վարժարանները շինուին կառավարութեան կողմէ (°) :

— Եւսման ծնի գանձարանին գանձաւանը նամակ մը գրելով Օրմանեան Պատրիարքին, կը հերքէ գողութեան խնդիրը :

— Ստեփան մէ, Ռուսիոյ ներքին գործերու նախարարին արտոնութեամբ հայ «եկեղեցական հոգաբարձութիւն» մը կազմուել է, որուն գործը պիտի ըլլայ ազգային բաներուն օգնել, եկեղեցիներով գարսցներ, անկեղծացներ և այլն բանալ նախապէս թոյլատուութիւն ստանալով : Միջոցներն են կարած, պատրաստ գրամագրութիւն և կամաւոր նուէր : Մասնաւոր կանոնադիր պատրաստուած է :

— Արտասահմանի մէջ գործունեայ ու օգտակար քահանաներ ալ ունինք : Սուշափաի հայոց քահանայ Տ. Յովհաննէս Մանուկունի հայ և ուսման լեզուով ազօթագիրք մը պատրաստել է, ինչպէս «արացի Տ. Ահմէդ քահանան նոյն լեզուներով ճոխ օրացոյց մը 1898ի : Երկուքն ալ կը յանձնարարենք մեր ընթերցողներուն : Մանչէսթրի հայերուն հոգեւոր հովիւ Տ. Թոսոյ Ջոզայեցի քահանան հայրապետական կոնգրէսով արտոնուել է վերսկսելու հրատարակումը իր «Հայաստանեայց Եկեղեցի» անուն կրօնական հանդէսին, զոր ատեն մը Պոլսոյ մէջ կը հրատարակէր :

ՔԱՂԱՎԱԿԱՆ ԴԵՊԳԵ

—) (—) ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կրկէն շուրջը կը շարունակուի ձգձգութի սիրտնանում քաղաքականութիւնը : Վերսկսու ընթերցիւնը շարքը, այս անգամ տաճկաց վեհապետին կողմէ : Արդարեւ Սուլթանը ձեռքի տակէ դիմուհներ ընելէ ետք սէրութիւններուն եւ եւրոպական վեհապետներուն մեծ մասին մօտ, խորին համոզում գոյացուցիւ է թէ Եսրիիս իշխանին թեկնածութիւնը որչափ մեծ շնորհ գտած էր, Հասեապէս հարկ էր ուրիշ միջոցի գիմել, թեւ առնելով Ռուսիոյ խա-

րուսիկ պաշտպանութեան : Ինք ալ սկսեւ է թեկնածուներ առաջարկել, մանաւանդ Կարաթոստրի Էֆէնտին, Օսմ. դեսպանն Պրուսիէի : Սակայն աւստրիական դեսպան Պաոսն Ֆօն Կալիչէ որուն առաջարկեր է այդ մարդը վերջին բռնկողութեան մը պահուն, բացարձակ մերժել է այդ առաջարկն հարողով իր պաշտօնակիցներուն : Իսկ Սուլթանի շուրջ գանուողներէ ոմանք խորհուրդ կուտան եղբեր իրեն բոլորովին չէզոք ընտրութիւն մը ընել, այս միջոցն աւելի ձարակի ըլլալով :

Տեյի Նիսի վիճակի թղթակցը, որ ընդհանրապէս խոշոր լուրեր կը հաղորդէ, կըսէ թէ Դուռը կրեւէի կառավարչութեան համար կառավարիչ Մօրէլ պէյը՝ նախկին քարտուղար Րիւսթէմ փաշայի : Այս մարդ Յրանաացի է : Կերեւայ որ վերելքը չէր ընդգծ մարդն այս է :

Վերջապէս անգլիական թերթերը կիմանան թէ գեսպանները իրենց առաջիկայ գումարման մէջ պիտի առաջարկեն եղբեր որ կրեւէին առաջապէս կառավարուի երկու տէրութեան կողմէ, վասն զի կառավարչի ընտրութեան գործը առկախ մնացած է մինչեւ կղզիին ամբողջական հանգարութիւնը :

Ջօլայի դասը կը շարունակուի մեծ ձգնաժամ մը կանցուցնէ Յրանա : Չվերջացաւ զիս վկայութիւններու անհատում շարքը : Ըսցցեք, տար ու սպանալից, կան ու կը մնան միշտ Ջօլայի գրական մեծ անձին շուրջ : Ռուկոն-Մալապուտի հեղինակը անդրողուի կը մայ փայտի տեղութեամբ :

Սպանիա այժմ բռնուած է Միացեալ-Նահանգներուն հետ, իրենց յարաբերութիւնները ձգտուած են : Փարգայթակղութեանը Կուպան է : Հուսանական կերեւնայ որ բախում մը տեղի ունենայ խաղաղական լալթներուն վրայ, վասն զի Սպանիա իր գոտտած գրահաւորներն սկսեւ է կազմաւորել : Յայտնի կերեւայ որ Կուպան վերջին ժամանակներու ապստամբ երկիրներուն մէջ ամէնէն բախտաւորն ու յաջողն կ'ըլլայ, եւ իրաւամբ :

Հնդկաստանի Անգլիական բանակին հրամանատար գործարար Լոքարտ յայտարարել է թէ փետր. 23ին պիտի վերսկսի զինուորական գործողութիւններուն եթէ ապստամբ Աֆրիկաները մինչեւ այն ատեն բացաձակ հնազանդութիւն չյայտնեն : Եթէ մեր գիտցած Աֆրիկաներն են, ասանկ ալ պիտի սկսեն սպանալիքներու շատ կարեւորութիւն չեն տար :

Միւս կողմէ Չինաստան կերեւայ որ պիտի յաջողի անգլիական փոխառութիւնը կնքել. եւ անշուշտ ճիշդ այս պատճառով է որ ձարուի Միքստոն մերժել է պատերազմական առկանքի վճարման համար Չինաստանի առաջարկած պայմանաժամը :

Պ. Պ. Թրարիէօ և Թէվընէ Յրանասի Մերակոյտին մէջ հարցապնդումներ պիտի ուղղեն այն ապօրինութիւններուն համար որք գործուել են Տրէյֆուսի դատին մէջ : Կառավարութեան որոշումով, այս մասին վիճարանութիւնը յետաձգուել է :

— Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ բանակցութիւններ կը կատարուին եղբեր Սեւ Մովի ուս կամաւոր նաւատորմին զրահաւորներուն ազգաւ անցուղարձին համար Վոսփորէ : Անշուշտ այս պատճառով է որ նոյն նաւատորմին «Փամպօր» զրահաւորը անցեալ օր 2,000 զինուորով և 16 թնդանօթով անցել է Վոսփորէն Վլատիվաթոք երթալու համար :

— Կրէսէի ուս զինուորներու մէկ շտաբ մարաւաւուն Օսմայ պիտի դառնայ :

— Պոլսէն կը ծանուցուի թէ Խոսալիոյ կառավարութիւնը նախաձեռնութիւն ստանձնել է առաջարկելու գահընկէցութեան որ կրեւտան խնդրէ անբողջական լուծումը յանձնել : Պոլսոյ վեց դեսպաններուն և Ահա Ե. որ խնդիր մը որուն մէջէն պիտի անցնի դժբախտ Կղզին :

— «Տէյի Քրոնիքլ» թիւննալի թղթակցը հեռեւեալ հեռագիրն ուղղած է, զոր «Փան» կարտասուպէ վերապահութեամբ :

«Նորիիս իշխան ծանուցուած ուղեւորութիւնն ընելէ առաջ գէպ Երոպա, Պալեստինայ երթալ Սուլթանն ապահովելու համար իր ուղղամտութեան մասին այն պարագային մէջ ուր Սուլթանը զինք իրեւ ընտրելի առաջարկէր կրեւէի կառավարչութեան պաշտօնին : »

— «Սթանսարտ» կըսէ թէ Հելլէն կառավարութիւնը զեռ պաշտօնապէս ապահովութիւն ստացած չէ յայն փոխառութեան եւրաշխաւորութեանը Ռուսիոյ, Յրանասի և Անգլիոյ կողմէ :

— Փետրուար 4ին Լոնտոնի մէջ հրատարակուել է կապոյտ տետրակ մը ի մասին Ասիական Թուրքիոյ նահանգներուն մէջ առաջ եկած գէպերուն : 1897 տարւոյն մեծադոյն մասը կը բովանդակէ, ապացոյցներ մէջ կը բերէ այն ճիշդութեան համար զորս Անգլիա և Յրանաս միասին թափած են՝ Ասիական Թուրքիոյ քրիստոնեաներուն վիճակը մեղմացնելու համար :

ՏԵՂԱԿԱՆ

Կիրակի օրը տեղոյս Ս. եկեղեցիին մէջ կրօնական պաշտամունք կատարուեցաւ Քլէմանթին իշխանուհիին ապաքինմանը համար : Խուռն բազմութիւն ներկայ էր :

Արարողութեան և ոք Թալ. Խորհուրդը փութաց իշխանին հեռագրով հարողով այս պաշտամունքին կատարումը և բժշկութիւն մաղթել իշխանուհիին : Կիրակի օրն իսկ իշխանը պալատան մարեշալիս միջոցով հեռագիրով պատասխանեց՝ հայոց այս համակրական ցոյցին համար իր բարձր ու զգածուած շնորհակալութիւնն յայտնելով,

—) (—)

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—) (—)

Ռուս խմբագիրը մը, Պ. Պարձէֆ ութամեայ տաժանակիր աշխատութեան դատապարտուել է, իսկ իր ընկերը Վերձպէֆ երկամեայ : Պարձէֆ ամբաստանուած էր իբր թէ Չարին ըսպանութիւնը գրգռած ըլլայ իր «Իտար մը ուս պատմութեան» գրքին հրատարակութեամբ եւ ուրիշ յօդուածներով :

— Տարոյս սկիզբէն Նիւ Եօրք իր արուարձաններուն հետ միացուելով աշխարհի մեծագոյն քաղաքներուն մէջ Բ. անգլը բռնեց : Այժմ միայն Լոնտոն զայն կը գերազանցէ : Նիւ Եօրքի բնակչութեան թիւը 2 միլիոնէն բարձրացաւ 3,380,000ի : արածութիւնն է 82,000 էկտար, փոխանակ 10,000ի ինչպէս էր առաջ : Այս միացման յիշատակն յաւելուցնելու համար, հաստատ խօսք կայ քաղաքին մէկ հրապարակին վրայ կանգնելու հսկայ աշտարակ մը, որուն քով էֆէլը աղուխաղալիկ պիտի ըլլայ եղբեր : 652 մէթր բարձր պիտի ըլլայ, համակ պողպատէ :

— Սուլթանին ամէնէն պղտիկ զաւակը, տասնհինգամեայ իշխանուհի մը, մեռել է :

Մեր ցաւակցութիւնները :

— Քուպա գացող Ամերիկեան զրահաւոր մը, «Մէյն», պայթման մը հետեւանք բռնկելով ընկղմել է 300 նաւաղ և 2 սպայ խոզուներ են : Ազատողները Քէյ-Վէսթ ցամաք ելլալով յայտարարել են որ սխալ է այն լուր թէ զուրսէն թշնամութեան մը պատճառով այդ աղէտը պատահած է :

ԱՐՏԱՌՈՑ ԽՈՐՀՐԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

—) (—)

Սոֆիաի «Իթիֆազ» լրագիրը Պուրքէշի ալպանական քոմիթէէն ստացած մէկ նամակին առթիւ կըսէ թէ մեծ տէրութիւններուն նպատակն ըլլալով պալքանեան փոքրիկ տէրութեանց բաժանումը իրենց մէջ, մակեդոնացիներու և ալպանիացիներու խլրտումներուն, ինչպէս և միշտ խոստացուած ու յետաձգուած բարենորոգումներուն մէջ պատրուակներ կը փնտռեն իրենց նպատակն առաջ տանելու : Աստի «Իթիֆազ» խորհուրդը կուտայ սոյն քոմիթէներուն որ իրենց կեդրոնը Պրիստինայի ու Ալեքսանդրիա փոխադրելով միայն երկրորդական քոմիթէներ ձգեն Չէթիւնէի, Աէրայէվօի և Պուրքէշի մէջ :

Թուրք լրագրին կարծիքն է թէ Մալեդոնիոյ և Ալպանիոյ ապագային համար ո՛չ Օսմ. կայսրութեան յարած մնալը կարելի է, չի բարենորոգումները երբեք չը պիտի իրականանան, ո՛չ Պալք. փոքր տէրութեանց մէջ ձուլուիլ, չի նուաստացուցիչ է Մեծն Ալեքսանդրի յաջորդներուն : Կը մնայ Աւստրիոյ գերիշխանութեան տակ առանձնաշնորհեալ նահանգի վերածուիլ, 10 տարուան մէջ բարգաւաճ տեղերու հաւասարելու համար : Ահա Արեւ. Խնդրոյն լուծման նոր և հանձարեղ ծրագիրը զոր կը ներկայացնէ «Իթիֆազ» :

—) (—)

